

Հավելված  
Գավառ համայնքի ավագանու՝  
2024 թ. դեկտեմբերի 30-ի N 373-Ա որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆ

2024թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| ՆԵՐՎԵՈՒԹՅՈՒՆ.....   | 2  |
| <b>ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ</b> .....  | 3  |
| ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԱԿԱՆ.....   | 4  |
| Աղբահանության ռազմավարական նպատակները.....  | 4  |
| Գաժար քաղաքի աղբահանության կառավարման ռազմավարության տեսլականը և<br>ռազմավարական նպատակները.....        | 5  |
| ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ.....  | 5  |
| ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ .....  | 9  |
| Թափոնների քանակն ըստ հիմնական տեսակների և դրանց գործածության ձևերի.....                                 | 11 |
| Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն.....   | 12 |
| ԻՐԱԶԵԿԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ .....  | 19 |
| ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ .....   | 20 |
| ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՅԱՏՈՒՄ .....  | 23 |
| <b>ԳԼՈՒԽ 2. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ</b> .....   | 28 |
| ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՈՒՄ .....                                     | 28 |
| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ (ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ և ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ) .....                                     | 30 |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ) .....   | 38 |
| ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՉԱՐԳԱՑՈՒՄ .....  | 40 |
| ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ .....   | 41 |
| ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ .....   | 46 |
| <b>ԳԼՈՒԽ 3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b> .....   | 49 |
| ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՈՒՄ ՍԱՅՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԹԻՐԱԽՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ .....                            | 50 |
| ԹԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....  | 52 |
| ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<br>ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... | 53 |

## Աղյուսակ 1

|  |  |
|--|--|
| Պլանի անվանում                                     | ՀՀ Գեղարքունիքի մարզ Գավառ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028 թվականների տեղական պլան             |
| Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր     | Գավառ համայնք, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Ծաղկաշեն, Գանձակ, Կարմիրգյուղ, Նորատուս, Հայրավանք, Ծովազարդ, Բերդկունք, Լճափ |
| Պլանավորման ժամանակաշրջան                          | <b>2024 – 2028 թվականներ</b>   |
| Ներկայացվող Պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը  | 2025թ. սեպտեմբեր<br>2027թ. սեպտեմբեր   |
| Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն        | <b>Կարինե Զաքյան</b>   |
| Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոս            | <a href="mailto:zakoyan.59@mail.ru">zakoyan.59@mail.ru</a><br>+37499719779   |
| Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե | <a href="mailto:zakoyan.59@mail.ru">zakoyan.59@mail.ru</a>   |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության և սանիտարական մաքրման արդյունավետ կառավարումը կենսական նշանակություն ունի համայնքի բնակչության առողջության պահպանման, շրջակա միջավայրի պահպանման և կայուն զարգացման ապահովման համար: Գավառ համայնքի 2024-2028 թվականների աղբահանության և սանիտարական մաքրման տեղական պլանը մշակվել է՝ հիմք ընդունելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ինչպես նաև համայնքային զարգացման երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը:

Տեղական պլանը նպատակ ունի ապահովել համակարգված և արդյունավետ լուծումներ՝ համայնքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման, աղբահանության ծառայությունների որակի բարելավման և շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման ուղղությամբ:

Այս պլանի մշակման հիմքում ընկած են հետևյալ առաջնահերթությունները.

- Թափոնների կառավարման ոլորտում գործող համակարգերի կատարելագործում:
- Բնակչության իրազեկման և մասնակցության խթանում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացներին:
- Աղբահանության ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում համայնքի բոլոր բնակավայրերում:
- Սանիտարական մաքրման ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծում՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը բարձրացնելու նպատակով:

2024-2028 թվականների պլանը նպատակ ունի նաև ներդնել թափոնների տեսակավորման, վերամշակման և վերականգնման նորարարական մոտեցումներ, որոնք կնպաստեն համայնքի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը:

Այս պլանը մշակվել է համայնքային մարմինների, տեղական բնակչության և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ համապարփակ և գործուն ծրագրեր առաջարկելու նպատակով: Այն հիմնված է նաև Գեղարքունիքի մարզի համայնքների ներուժի գնահատման վրա՝ ապահովելով համահունչ և կայուն զարգացման ուղի:

## ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գավառ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի ներկայիս վիճակը հանդիսանում է համայնքի շրջակա միջավայրի և բնակչության կյանքի որակի վրա անմիջական ազդեցություն ունեցող կարևորագույն հարցերից մեկը: Վերջին տարիներին համայնքում իրականացվել են որոշակի քայլեր համակարգի բարելավման ուղղությամբ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ մարտահրավերներ, որոնք պահանջում են համալիր մոտեցում և երկարաժամկետ լուծումներ:

### *Աղբահանության ներկայիս համակարգը*

- Կոշտ կենցաղային թափոնների հավաքագրում և տեղափոխում**
  - Թափոնների հավաքագրման համակարգը գործում է մասնակի արդյունավետությամբ, ինչը պայմանավորված է ինչպես տեխնիկական ռեսուրսների սահմանափակությամբ, այնպես էլ թափոնների տեսակավորման մեխանիզմների բացակայությամբ:
  - Հավաքման գրաֆիկի և ծառայությունների համատարած հասանելիության խնդիրները համայնքի որոշ բնակավայրերում առաջացնում են թափոնների կուտակումներ:
- Սանիտարական մաքրման գործընթաց**
  - Մաքրման աշխատանքները հիմնականում իրականացվում են համայնքի կենտրոնական հատվածներում, մինչդեռ երկրորդային ճանապարհները և գյուղական բնակավայրերը հաճախ դուրս են մնում ծառայությունների ծավալից:
  - Մաքրման համար օգտագործվող տեխնիկան և աշխատուժը չեն բավարարում համայնքի աճող կարիքները:
- Թափոնների վերամշակում և տեսակավորում**
  - Համայնքում դեռևս չկա գործող տեսակավորման կամ վերամշակման կենտրոն, ինչը հանգեցնում է թափոնների չվերականգնվող օգտագործմանը:
  - Թափոնների մեծ մասն ուղղվում է աղբավայրեր, ինչը առաջացնում է էկոլոգիական և սանիտարական խնդիրներ:

### *Մարտահրավերներ*

- Տեխնիկական ռեսուրսների սահմանափակություն**  
Աղբահանության համար նախատեսված տեխնիկական և սարքավորումները չեն համապատասխանում համայնքի չափսերին և կարիքներին:
- Իրավական և կազմակերպչական խոչընդոտներ**  
Առկա չեն համայնքային աղբահանության կարգավորման համապարփակ ընթացակարգեր և երկարաժամկետ ռազմավարություններ:
- Բնակչության իրազեկման պակաս**  
Թափոնների տեսակավորման և վերամշակման վերաբերյալ բնակչության իրազեկությունը շատ ցածր է, ինչը խոչընդոտում է կոլեկտիվ մոտեցման ներդրմանը:
- Աղբավայրերի չկարգավորված վիճակ**  
Գավառ համայնքի աղբավայրերը չեն համապատասխանում սանիտարական նորմերին՝ դառնալով շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուր:

## Հնարավորություններ

Չնայած առկա խնդիրներին՝ համայնքը ունի մի շարք ներուժային հնարավորություններ՝

- Բարելավելու թափոնների կառավարման գործընթացը՝ ներգրավելով միջազգային փորձ և նորարարական տեխնոլոգիաներ:
- Մշակելու և ներդնելու բնակչության ներգրավվածության ծրագրեր՝ թափոնների կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:
- Կառուցելու տեսակավորման և վերամշակման ենթակառուցվածքներ՝ համայնքի տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով:

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԱԿԱՆ

### Աղբահանության ռազմավարական նպատակները

Գավառ համայնքի աղբահանության կառավարման 2024-2028թվականների պլանով սահմանվել են աղբահանության ռազմավարական ուղղությունները և երկարաժամկետ նպատակները:

1. Համակարգի զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր ներքին օրենսդրություն և կանոնակարգեր)
2. Աղբահանության տեխնիկական միջոցների զարգացում (Աղբի կուտակման, ավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման, վերամշակման /վնասագերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր)
3. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն (ինքնաձախսաձածկման հնարավորություններ և տնտեսական արդյունավետության բարձրացում, աղբահանության վճարների գանձման մեթոդներ, ստացականների և պայմանագրերի կիրառման ձևեր, աղբի տեսակավորման և վերամշակման հնարավորություններ և այլն)
4. Հանրային իրազեկություն և մասնակցություն (երկկողմանի տեղեկատվության կիրառում):

Ստորև ձևակերպված են այդ 4 նպատակները, որոնք համապատասխանում են վերոնշյալ ոլորտներին.

- Ա. Ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացում (կառավարում և կազմակերպչական հարցեր, ներքին կանոններ և կանոնակարգեր):
- **Նպատակ 1.** Բարելավել համայնքում աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային դաշտ:
- Բ. Աղբահանության կառավարման ենթակառուցվածք (ԿԿԹ կուտակման, հավաքման, տեղափոխման, տեղակայման, տեսակավորման և վերամշակման/վնասագերծման տեխնիկական հնարավորություններ և ձևեր):
- **Նպատակ 2.** Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Գավառ համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասագերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց՝ արդյունավետ համագործակցելով օպերատորների հետ:
- Գ. Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն:
- **Նպատակ 3.** Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:
- Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն:
- **Նպատակ 4.** Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացին:

## Գավառ քաղաքի աղբահանության կառավարման ռազմավարության տեսլականը և ռազմավարական նպատակները.

### Իրավիճակային վերլուծություն (SWOT)

Հաշվի առնելով Գավառ համայնքի աղբահանության ներկայիս իրավիճակը կատարվել է աղբահանության ներքին պոտենցիալի և արտաքին բարենպաստ ազդեցության, ինչպես նաև համայնքի թույլ կողմերի և համայնքից դուրս գտնվող բացասական ազդեցությունների վերլուծություն (SWOT վերլուծություն): Ստորև ամփոփ ներկայացվում է այդ վերլուծության արդյունքները: Վերլուծությունը թույլ է տալիս ուրվագծել այն պայմանները, որոնք սպասվում են ապագայում՝ հաշվի առնելով արտաքին դրական և բացասական ազդեցությունները:

Գավառ համայնքի աղբահանության SWOT վերլուծություն.

#### **ՈՒՑԵՂ ԿՈՂՄԵՐ**

- համայնքում աղբահանություն իրականացնող համայնքային հիմնարկի առկայություն
- աղբահանության գրաֆիկի առկայություն
- համապատասխան տեխնիկայով հագեցվածություն
- ժամանակակից տեխնիկայով վերազինում
- դռնոր կազմակերպությունների ներգրավում
- սահմանված է ցածր սակագին

#### **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- աղբի տեսակավորման և վերամշակման ծրագրերի իրականացում
- գարգացած երկրների փորձի տեղայնացում
- բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
- սպասարկման որակի բարձրացում
- շրջակա միջավայրի նկատմամբ բնակչության հոգածության բարձրացում
- տեսակավորված աղբից համայնքի բյուջե հավելյալ եկամուտ
- Բազմաբնակարան շենքերում կրծողների խնդրի կարգավորում

#### **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**

- վարձավճարների հավաքագրման ցածր մակարդակ
- ինքնաձախսածածկման անհնարիություն
- բանվորական աշխատուժի բացակայություն
- հասարակության անբարեխիղճ վերաբերմունք
- բնակչության կողմից ոչ ճիշտ տեսակավորման իրականացում

#### **ՎՏԱՆԳՆԵՐ**

- Ճանապարհների շահագործման սեզոնային դժվարություններ
- չհավաքագրվող աղբահանության վճարների գանձման համար անհրաժեշտ օրենսդրական լծակների բացակայություն
- տեսակավորման համակարգի թերի իրականացում

## ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պլանում ներառված է պլանավորվող տարածքի ընդհանուր բնութագիրը:

Պլանավորման տարածքը ընդգրկում է Գավառ համայնքը՝ աղբահանության գոտիավորման դեպքում:

### **ա. Պլանավորման տարածքի նկարագրություն.**

Գավառ համայնքը գտնվում է Գեղամա լեռների արևելյան լանջին՝ Գավառագետի ստորին հոսանքի ավազանում: 1995թ.-ից հանդիսանում է Գեղարքունիքի մարզի մարզկենտրոնը:

Այսպիսով, ներկայումս Գավառ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են Գավառ քաղաքը Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխանգյուղերը: Համայնքի կենտրոնը Գավառ քաղաքն է: Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 98 կմ է: Համայնքի վարչական տարածքը կազմում է 25228.08 հա: Համայնքի տնային տնտեսությունների թիվը 15473 է, առկա բնակչության թիվը կազմում է 61904 մարդ: Գավառ համայնքն ունի 27 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն, մարզադպրոց, երաժշտական դպրոցներ, գրադարանների կենտրոնացված համակարգ, մշակութային կենտրոններ, արվեստի դպրոցներ և կոմունալ սպասարկում և բարեկարգում համայնքային հիմնարկ:

**Աղյուսակ 2**

|                                 | Ընդհանուր տարածք | Քաղաքային | Գյուղական | Արդյունաբերական | Գյուղատնտեսական | Կանաչ, անտառային |
|---------------------------------|------------------|-----------|-----------|-----------------|-----------------|------------------|
| Տարածքը (հա)                    | 60385,737        | 1480,3999 | 3318,54   | 559.69          | 54961,78        | 65,33            |
| Տարածքը տոկոսով ընդհանուրից (%) | 92,07            | 2,26      | 5,06      | 0,85            | 83,8            | 0,1              |


***բ. Աշխարհագրական սահմաններ.***

Քարտեզի վրա նշված է տարածքի աշխարհագրական սահմանները և տեղադրել է ենթաբաժնում :

<https://maps.app.goo.gl/fXHbxVQdzYD1zC1s8> Գավառ համայնքի ընդհանուր տարածքը՝



<https://maps.app.goo.gl/2qPaL8RKjnvDgd9y8> Աղբավայրի գտնվելու վայրը`





**գ. Ժողովրդագրական տեղեկատվություն.**

**Աղյուսակ 3**

| Գրանցված<br>բնակչություն (մարդ) | Փաստացի բնակվող<br>(մարդ) | Տնտեսությունների<br>թիվ | Բազմաբնակարան<br>ենքերի թիվ | Բնակարանների<br>թիվ |
|---------------------------------|---------------------------|-------------------------|-----------------------------|---------------------|
| 62400                           |                           | 13100                   | 76                          | 2297                |
|                                 |                           |                         |                             |                     |

**դ. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը.**

**Աղյուսակ 4**

| Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների<br>տեսակները   | Քանակ       | Նշումներ |
|--|-------------|----------|
| <ul style="list-style-type: none"> <li><b>Բնակելի նպատակային նշանակության շինություններ</b></li> </ul>                 |             |          |
| Բազմաբնակարան բնակելի շենքեր   | 76          |          |
| Անհատական բնակելի տներ   | 13100       |          |
| <ul style="list-style-type: none"> <li><b>Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ</b></li> </ul>              | <b>2735</b> |          |
| Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ   | 218         |          |
| Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համարանախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ | 3           |          |
| Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համարանախատեսված շինություններ                         | 36          |          |
| Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ   | 13          |          |
| Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ  | 80          |          |
| Շինություններ, որտեղ իրականացվում է մեկիցավելի, առանձնացված տնտեսական գործունեություն                                  | 3           |          |

# ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ա. Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են.

- մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը 12800(տոննա/տարեկան)
- մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով 291(մարդ/կգ/տարի)
- մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով 0,8 (մարդ/կգ/օր)

## բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը

- **Կոշտ կենցաղային թափոն՝** աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված թափոն,
- **Խոշոր եզրաչափի թափոն՝** 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում,
- **Շինարարական աղբ՝** քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով առաջացող աղբ,
- **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն,**
- **Փաթեթավորման թափոն՝** կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն,
- **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)՝** չշահագործվող սարքավորում, որը սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,
- **Կենսաբանական թափոն՝** կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ
- **Պարտեզային թափոն՝** այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,
- **Անվաղողեր՝** մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվաղողեր
- **Վտանգավոր թափոն՝** (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն, հնարավոր ցանկը ներկայացված է հավելվածում:

Պայմանավորված այն հանգամանքով, որ դեռևս թափոնների բաղադրության մանրակրկիտ ուսումնասիրություն չի իրականացվել, ուստի աղյուսակ 5-ը չի լրացվում:

**Աղյուսակ 5**

| I Թափոնի տեսակը     | % | II Թափոնի տեսակը՝ մանրակրկիտ բաղադրության ուսումնասիրության դեպքում | % |
|---------------------|---|---|---|
| Օրգանական           |   | Խոհանոցային   |   |
|                     |   | Այգիներից պուրակներից և այլ կանաչ տարածքներից                       |   |
| Թուղթ և սովաբաթուղթ |   |   |   |
| Պլաստիկ             |   | Պլաստիկ շշեր  |   |
|                     |   | պոլիէթիլենային փաթեթավորումներ                                      |   |
|                     |   | Պլաստիկ տարաներ   |   |
| Ապակի               |   |   |   |

|           |  |            |  |
|-----------|--|------------|--|
| Մետաղ     |  |            |  |
| Այլ թափոն |  | էլեկտրական |  |
|           |  | տեքստիլ    |  |
|           |  | փայտ       |  |
|           |  | վտանգավոր  |  |
|           |  | Այլ        |  |

Աղյուսակ 6

|     | Թափոններ գործածության ձև                       | Նկարագրություն  |
|-----|--|---|
| I   | Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում      | Գավառ համայնքում իրականացվում է թափոնների խառը հավաքում և հեռացում համայնքային հիմնարկի կողմից դեպի աղբավայր, ինչպես նաև թափոն առաջնացնողի կողմից աղբի ինքնափոխադրում դեպի աղբավայր |
| II  | Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում   | Սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորված հավաքում կամ թափոն առաջացնողի կողմից տեղափոխում դեպի տեսակավորման կենտրոն չի իրականացվում Գավառ համայնքում                                   |
| III | Թափոնների վերաօգտագործում և վերակիրառում       | -   |
| IV  | Թափոնների վերամշակում և օգտահանում             | -   |
| IV  | Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում /  | -   |
| VI  | Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում | -   |
| VII | Տեղադրում սանիտարական աղբավայրում              | համայնքում թափոնների տեղադրումն իրականացվում է <b>քաղաքաշինական</b> , բնապահպանական սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրում   |

Թափոնների քանակն ըստ հիմնական տեսակների և դրանց գործածության ձևերի

Աղյուսակ 7

| Թափոնի տեսակ   | Աղբի գոյացում 1շնչի հաշվով, կգ/տարի/մարդ | Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի | Թափոնների գործածության ձևեր            |  |  |   |  |  |   | Նշումներ |
|--|--|-----------------------------------|--|--|--|---|--|--|---|----------|
|  |  |                                   | I                                      | II   | III  | IV  | V  | VI   | VII   |          |
|  |  |                                   | Խառը հավաքում<br>(% ընդհանուր քանակից) | Տեսակավորված հավաքում<br>(% ընդհանուր քանակից) | Վերաօգտագործում/կրկնօգտագործում<br>(% ընդհանուր քանակից) | Վերամշակում/կամ օգտահանում<br>(% ընդհանուր քանակից) | Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում<br>(% ընդհանուր քանակից) | Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում<br>(% ընդհանուր քանակից) | Տեղադրում մասնախտաղբավայրում<br>(% ընդհանուր քանակից) |          |
| Կոշտ կենցաղային թափոն                                    | 291                                      | 12800                             | 100                                    | -  | -  | -   | -  | -  | 100   |          |
| Խոշոր եզրաչափերի թափոն                                   |  |                                   |  |  |  |   |  |  |   |          |
| Շինարարական աղբ  | 1.03                                     | 230                               | 10                                     | 90   |  |   |  |  | 90  |          |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն | -  |                                   |  |  |  |   |  |  |   |          |
| Անվադողեր  | -  |                                   |  |  |  |   |  |  |   |          |
| Փաթեթավորում և փաթեթվածք                                 | -  |                                   |  |  |  |   |  |  |   |          |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն                          | -  |                                   |  |  |  |   |  |  |   |          |
| Կենսաբանական թափոն                                       | -  |                                   |  |  |  |   |  |  |   |          |
| Վտանգավոր թափոններ                                       | -  |                                   |  |  |  |   |  |  |   |          |

## Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն

➤ Աղբահանություն և կոշտ կենցաղային թափոնների հավաքում:

Աղյուսակ 8

| Թափոնների հավաքման տեղ                | Ծառայությունից օգտվող բնակչություն (%) | Տեսակավորված հավաքում (տոննա) | Տեսակավորված հավաքում (%) | Չտեսակավորված հավաքում (տոննա) | Չտեսակավորված հավաքում (%) | Նշումներ |
|---------------------------------------|--|-------------------------------|---------------------------|--------------------------------|----------------------------|----------|
| Աղբամաններից                          | 49                                     | 0                             | 0                         | 6272                           | 49%                        |          |
| Աղբախցերից                            | -                                      |                               |                           |                                |                            |          |
| Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից | 50                                     |                               |                           | 6400                           | 50%                        |          |
| Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից | -                                      |                               |                           |                                |                            |          |
| Ինքնափոխադրում                        | 1%                                     |                               |                           |                                | 1%                         |          |

➤ Աղբահանություն իրականացնող օպերատորներ

Աղյուսակ 9

| Օպերատորի անվանում   | Սպասարկվող համայնքներ / բնակավայրեր | Սպասարկվող տարածքի ֆնանսավորում | Օպերատորի անվանում | Օպերատորի հասցե (բաց/փակ թափափուկ, կոմպակտորեն)   | Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ..., շինարարական և այլն հավաքում | Օպերատորի աշխատանքի գնահատական (1-ից 5) | Նշումներ |
|--|-------------------------------------|---------------------------------|--------------------|---|---|---|----------|
| Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում է համայնքային հիմնարկ | Գավառ                               | 22382<br>22860                  | 6                  | բ/թ ՁԻԼ ՄՄՁ 4502 7մ/խ<br>փ/թ ՁԻԼ 433362 8մ/խ<br>բ/թ ՁԻԼ ՄՄՁ 4502 5մ/խ<br>բ/թ ՁԻԼ ՄՄՁ 554Մ 7մ/խ<br>փ/թ ԳԱՁ -53 4մ/խ<br>բ/թ ՁԻԼ ՄՄՁ 4502 5մ/խ | խառը  | 4                                       |          |
|  | Սարուխան                            |                                 | 1                  | բ/թ ՁԻԼ ՄՄՁ 45021 5մ/խ  | խառը  |   |          |
|  | Գեղարքունիք                         |                                 | 1                  | բ/թ ՁԻԼ ՄՄՁ 4502 5մ/խ   | խառը  |   |          |
|  | Լանջաղբյուր                         |                                 |                    |   |   |   |          |
|  | Գանձակ                              |                                 | 1                  | բ/թ ՁԻԼ ՄՄՁ 4502 1 5մ/խ   | խառը  |   |          |
|  | Ծաղկաշեն                            |                                 |                    |   |   |   |          |
|  | Կարմիրգյուղ                         |                                 | 1                  | բ/թ ՁԻԼ ՄՄՁ 45021 5մ/խ  | խառը  |   |          |
|  | Նորատուս                            |                                 | 1                  | բ/թ ԳԱՁ 330700 4մ/խ   | խառը  |   |          |
|  | Ծովազարդ                            |                                 | 1                  | բ/թ ՁԻԼ ՄՄՁ 4502 5մ/խ   | խառը  |   |          |
|  | Հայրավանք                           |                                 |                    |   |   |   |          |
|  | Բերդկունք                           |                                 | 1                  | բ/թ ՍԱՁ 3507 5մ/խ   | խառը  |   |          |
|  | Լճափ                                |                                 |                    |   |   |   |          |

➤ Աղբի տեղափոխման սխեմաներ

Աղյուսակ 10

| Թափոնի տեսակ   | Հեռավորություն մինչև աղբավայր, կմ | Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան, կմ | Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն, կմ | Հեռավորություն մինչև յլգործածության կայանք /վերամշակման գործարան/ն ալյն/կմ | Նշումի նքնափոխաղբմանմասին |
|--|-----------------------------------|--|---|--|---------------------------|
| Կոշտ կենցաղային թափոն                                    | 10                                | -  | -   | -  |                           |
| Խոշոր եզրաչափերի թափոն                                   |                                   | -  | -   | -  |                           |
| Շինարարական աղբ  | 10                                | -  | -   | -  | V                         |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն |                                   | -  | -   | -  |                           |
| Անվաղողեր  |                                   | -  | -   | -  |                           |
| Փաթեթավորում և փաթեթվածք                                 |                                   | -  | -   | -  |                           |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն                          |                                   | -  | -   | -  |                           |

➤ Վերօգտագործում և նախապատրաստում վերօգտագործման կամ վերակիրառման համար

Աղյուսակ 11

| Արտադրողի անվանում | Արտադրանքի տեսակ | Վերադարձվող բաղադրիչ(ապակե, պլաստիկե տարա, փաթեթավորում և այլն) | Վերադարձի/հավաքման մեխանիզմ (ընդունվում է գործարանում, խանութում, ընդունման կետերում) | Սպառողի համար վերադարձի հարմարություն (անհարմար, հարմար) | Նշումներ |
|--------------------|------------------|---|---|--|----------|
|                    |                  |   |   |  |          |
|                    |                  |   |   |  |          |
|                    |                  |   |   |  |          |

Աղյուսակը չի լրացվում, քանի որ Գավառ համայնքում չկան վերօգտագործվող և վերակիրառվող թափոններ:

➤ Վերանորոգման կարողություններ

Աղյուսակ 12

| Արտդրանքի տեսակ                              | Վերանորոգման կետերի թիվ | Նշումներ |
|--|-------------------------|----------|
| Սառնարան                                     | 1                       |          |
| Լվացքի մեքենա                                | 2                       |          |
| Այլ կենցաղային տեխնիկա                       | 4                       |          |
| Հագուստ կոշիկ                                | 11                      |          |
| Կահույք                                      | 3                       |          |
| Ավտոպահեցման մասեր                           | 7                       |          |
| Շինարարություն /պատուհան, դուռ, տանիք և այլն | 4                       |          |

➤ Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում

Աղյուսակ 13

| Տեսակավորվող թափոնի տեսակ | Հավաքվում է ընդունման կետում (այո/ոչ) | Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ) | Հավաքվում է սպասարկման և օբյեկտներից (այո/ոչ) | Հավաքվում է աղբավայրերում (այո/ոչ) |
|---------------------------|---------------------------------------|-----------------------------------|---|------------------------------------|
| Ապակի                     | այո                                   | այո                               | այո   | այո                                |
| Պլաստիկ                   | այո                                   | այո                               | այո   | այո                                |
| Մետաղ                     | այո                                   | այո                               | այո   | այո                                |
| Թուղթ                     | ոչ                                    | այո                               | ոչ  | ոչ                                 |
| Ավտոմեքենայի մարտկոց      | այո                                   | ոչ                                | ոչ  | ոչ                                 |
| Այլ թափոններ /նշել/       |                                       |                                   |   |                                    |

➤ Թափոնների գործածության կայանքներ

Աղյուսակ 14

| Թափոնների գործածության կայանքներ | Առկայություն (պլանավորման տարածքում առկա է/առկաչէ, առկա է այլ տարածքում) | Հզորություն, հազ տ/տարի | Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ | Նշումներ |
|----------------------------------|--|-------------------------|---|----------|
| Տեսակավորման կենտրոն             | առկա չէ  |                         |   |          |
| Ապակու վերամշակման կայանք        | առկա չէ  |                         |   |          |
| Մետաղի վերամշակման կայանք        | առկա չէ  |                         |   |          |
| Պլաստիկի վերամշակման կայանք      | առկա չէ  |                         |   |          |
| Թղթի վերամշակման կայանք          | առկա չէ  |                         |   |          |
| Կոմպոստացման կայանք              | առկա չէ  |                         |   |          |
| Կենսազազիարտադրման կայանք        | առկա չէ  |                         |   |          |



|                              |         |  |    |  |
|------------------------------|---------|--|----|--|
| Աղբակիզման կայանք            | առկա չէ |  |    |  |
| Վնասագերծման/վերացման կայանք | առկա չէ |  |    |  |
| Փոխաբեռնման կայան            | առկա չէ |  |    |  |
| Աղբավայր                     | առկա է  |  | 10 |  |
| Այլ /նշել/                   |         |  |    |  |

➤ **Աղբավայրեր և աղբանոցներ**

**Աղյուսակ 15**

| Աղբավայր /գտնվելու վայրը/ | Շահագործող համայնքներ /բնակավայրեր | Աղբավայրի մակերես, հա | Տեղադրվող աղբի տեսակ | Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/ | Սեփականության /օգտագործման իրավունք      | Շահագործողի անվանում  | Աղբի տեղադրման վճարը /ՀՀ դրամ/տոննա | Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհատվածի վիճակը |
|---------------------------|------------------------------------|-----------------------|----------------------|---|--|---|-------------------------------------|--|
| Նորատուսի համայնք         | Գավառ                              | 2                     | չտեսակավորված աղբ    | Համայնքի ղեկավարի որոշում 10.05.2023թ թիվ 911-Ա | Սեփականության վկայական N21062023-05-0005 | «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում է համայնքային հիմնարկ |                                     | բավարար  |
|                           | Սարուխան                           |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Գեղարքունիք                        |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Լանջաղբյուր                        |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Գանձակ                             |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Ծաղկաշեն                           |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Կարմիրգյուղ                        |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Նորատուս                           |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Ծովազարդ                           |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Հայրավանք                          |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Բերդկունք                          |                       |                      |   |  |   |                                     |  |
|                           | Լճափ                               |                       |                      |   |  |   |                                     |  |

➤ Պատասխանատվության փաստացի բաշխումը

Աղյուսակ 16

| Պատասխանատուներ               | Իրազեկության բարձրացում (%) | Խառը հավաքում (%) | Տեսակավորված հավաքում (%) | Տեղափոխում (%) | Տեսակավորում /գործարանային/ (%) | Վերաօգտագործում/կրկնօգտագործում (%) | Վերամշակում/կամ օգտահանում (%) | Վտանգավոր թափոնների վնասագրծում/վերացում (%) | Տեղադրում աղբավայրում (%) |
|-------------------------------|-----------------------------|-------------------|---------------------------|----------------|---------------------------------|-------------------------------------|--------------------------------|--|---------------------------|
| ՏԻՄ                           | 50                          | 100               | 60                        | 80             | -                               | -                                   | -                              | -  | 80                        |
| Մանսավոր հատված               | 10                          |                   | 10                        | 10             |                                 |                                     |                                |  | 20                        |
| Արտադրող                      |                             |                   |                           | 5              |                                 |                                     |                                |  |                           |
| Բնակչություն                  | 30                          |                   | 25                        |                |                                 |                                     |                                |  |                           |
| Քաղաքացիական կազմակերպություն | 10                          | -                 | 5                         | 5              | -                               | -                                   | -                              | -  |                           |

➤ Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնների տեսակների գործածության

Աղյուսակ 17

| Թափոնի տեսակ   | Իրազեկության բարձրացում | Խառը հավաքում   | Տեսակավորված հավաք | Տեղափոխում | Վերաօգտագործում/կրկնօգտագործում | Վերամշակում/կամ օգտահանում | Տեղադրում աղբավայրում |
|--|-------------------------|-----------------|--------------------|------------|---------------------------------|----------------------------|-----------------------|
| Կոշտ կենցաղային թափոն                                    | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ          | ՏԻՄ             |                    | ՏԻՄ        |                                 |                            | ՏԻՄ                   |
| Խոշոր եզրաչափերի թափոն                                   | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ          | ՏԻՄ             |                    | ՏԻՄ        |                                 |                            | ՏԻՄ                   |
| Շինարարական աղբ  | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ          | ՏԻՄ<br>ՄՀ       | ՏԻՄ<br>ՄՀ          | ՏԻՄ<br>ՄՀ  |                                 |                            | ՏԻՄ                   |
| Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ          | ՏԻՄ<br>ՄՀ<br>ԲՆ | ՄՀ                 | ՏԻՄ        |                                 |                            | ՏԻՄ                   |

|                                 |                       |                 |                |     |  |  |     |
|---------------------------------|-----------------------|-----------------|----------------|-----|--|--|-----|
| Անվարդողեր                      | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ        | ՏԻՄ<br>ՄՀ<br>ԲՆ | ՄՀ<br>ԲՆ<br>ՔԿ | ՏԻՄ |  |  | ՏԻՄ |
| Փաթեթավորում և փաթեթվածք        | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ        | ՏԻՄ<br>ՄՀ<br>ԲՆ |                | ՏԻՄ |  |  | ՏԻՄ |
| Էլեկտրական և էլեկտրոնային թափոն | ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ        | ՏԻՄ<br>ՄՀ       |                | ՏԻՄ |  |  | ՏԻՄ |
| Կենսաբանական թափոն              | ՏԻՄ<br>ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ | ՏԻՄ<br>ՄՀ<br>ԲՆ |                | ՏԻՄ |  |  | ՏԻՄ |
| Վտանգավոր թափոններ              | ՏԻՄ<br>ՄՀ<br>ՔԿ<br>ԲՆ | ՏԻՄ<br>ԲՆ       |                |     |  |  | ՏԻՄ |

➤ **Անձնակազմի կարողությունների գնահատում**

**Աղյուսակ 18**

| Հմտություն/ ոլորտ                    | Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը | Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ(1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց) | Նշումներ |
|--------------------------------------|--|---|----------|
| Թափոնների կառավարման գիտելիքներ      | 3  | 3   |          |
| ՀՀօրենսդրության իմացություն          | 3  | 4   |          |
| Տվյալների հավաքագրում                | 2  | 4   |          |
| Համակարգչային քարտեզագրում           | 1  | 5   |          |
| Գնումների կազմակերպում               | 2  | 5   |          |
| Պայմանագրերի կառավարում              | 2  | 4   |          |
| Գործառնական հմտություններ            | 2  | 4   |          |
| Ֆինանսական վերլուծության իմացություն | 3  | 4   |          |

➤ **Աղբահանության և Կոշտ թափոնների գործածության քարտեզ**

Ներկայումս իրականացվում են պլանավորման տարածքի քարտեզագրման աշխատանքներ, որից հետո այն կտեղադրվի ենթաբաժնում:

Աղյուսակ 19

| Հարցեր   | Իրազեկվածության/գոհունակության աստիճան /1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-զերազանց/ | Նշումներ/ առաջարկություններ |
|--|---|-----------------------------|
| <b>1. Թափոնների կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ.</b> |   |                             |
| Կրթության տարբեր աստիճաններ (նախադպրոցական, դպրոցական, բուհական)       | 3   |                             |
| Սոցիալական գովազդներ   | 3   |                             |
| Պաշտոնական տեղեկատվություն ՋԼՄ-ներով                                   | 3   |                             |
| Քաղաքացիական կազմակերպությունների գործունեություն                      | 4   |                             |
| <b>2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն.</b>           |   |                             |
| Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազեցությունները                | 3   |                             |
| Թափոնների թերի կառավարման սոցիալական ազեցությունները                   | 4   |                             |
| Թափոնների թերի կառավարման տնտեսական ազեցությունները                    | 4   |                             |
| Թափոնները աղբավայր հեռացնելու ազդեցությունները                         | 4   |                             |
| Թափոնների հիերարխիայի իմացություն                                      | 3   |                             |
| Օրենսդրության խրախուսող գործիքներ                                      | 3   |                             |
| Օրենսդրության պատժիչ գործիքներ   | 4   |                             |
